

ԻՐԱՒՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարխոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մէկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Անտիկալի » 2.60 տղ. վեցամս 1.50

ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եւայլն դրկել ձեռնեայ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա)

Редакция на ВѢСТНИКЪ

„И праву нкъ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեայ գրութիւն եւ չեն դրկուի եւ յարմար դասուածները միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:
Դանուցման տղը 20 սանթիմ. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լինի:

ԲԱՑՈՒԱԾ Է

ԻՐԱՒՈՒՆԿԻ Զ. ՏԱՐԵՇՐԱՅԱՆԻ ԲԱՆՈՒՆԿ

ՓԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ Յունվար 1 էն սկսեալ

Նոր բաժանորդ գրութիւն փափաքողներ լաւ կ'ընեն եթէ այսօր ուրեք իմացնեն մեզ իրենց հասցէները:

Իրաւաւոր բաժանորդագրութեան պայմանները նորից կը մընան. այսինքն՝ Պուլկարիայ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 6 ֆր. Արտասահմանի համար (երկու քիւր մէկ ծրարով) տարեկան 14 ֆր. վեցամսեայ 7 ֆր. Իսկ արտասահմանէ իւրաքանչիւր թիւը օրին զատ ստանալ փափաքողներ պարտին տարեկան 2 ֆր. աւելի վճարել, որ փոստի ծախքին տարբերութիւնն է:

Ինչպէս քանի մը ամիս առաջ մտադրութիւն յայտնած էինք իրաւաւոր ծաւալը մեծցնելու, նոյն մտադրութիւնը ունինք եւ այսօր. բայց որովհետեւ այդ կերպով մեր ծախքին վրայ նշանակել լի յաւելում մը պիտի ըլլայ՝ որ չենք ուզեր բնաւ բաժանորդագրելին վրայ բարդել՝ կ'սպասենք որ անոր փոխարէն մեր բաժանորդները աւելնան, որով կարող ըլլանք համակշիւ թերթին ելեւմուտքը: Այսինքն մեր արդի բաժանորդներուն վրայ եթէ 150 ի չափ նորից ալ աւելնան, կը խոստանանք իրաւաւոր ծաւալը մէկու կէս պատիկ մեծցնել: Արդ խընդիւրը կը մնայ թերթի ուղղութեանը համակիր ազգայնոց եռանդին:

Իրաւաւոր ծաւալը մեծնալով թէն բաժնեգիրն նոյնը պիտի մնայ, բայց ձեռքէ 5 սանթիմ աւելի պիտի ծախուի. ուստի ցորդ ձեռքէ առնողներ՝ դորս մեզ քաջաբերողներ չենք նկատեր, լաւագոյն կ'ընեն եթէ այժմէն բաժանորդ գրութիւն, որով թէ մեզ քաջաբերած կըլլան եւ թէ թերթը աւալի աժան եւ կանոնաւոր կը ստանան:

ՊԱՐՍԿԱՆԱՅԱՍՏԱՆԸ

Ամեն հայ թերթ մասնաւոր գոհունակութեամբ ծանոյց եւ ամեն հայ անհատ արտի ուրախութեամբ իմացու Պարսից Մուղաֆէթէտին Շահի իր երկրի հայերուն շնորհած նորանոր արտօնութեանց լուրը: Իրանեան վեհապետը իր նոր շնորհներով հայերը ազատ կը ձգէ Պարսկաստանի մէջ ուղած տեղեր. նին վարժարան բանալու, հրապարակախօսութիւններ բնալու եւ ամեն կարգի ընկերութիւններ կազմակերպելու:

Շահին Պոլիս այցելելէն վերջէն շահի հայերը ցոյց տուած այդ մասնաւոր համակրանքը նոյն իսկ եւրոպական թերթերու կողմէն ներկայացուցաւ Սուլթանի կամքին դէմ անարգանք մը: Արեւելեանք թէ Սուլթանը Շահին հետ իր ունեցած տեսակցութեանց միջոցին փափաք յայտնած է որ Պարսկաստանի մէջ հայոց դէմ ճնշումներ ու խտրութիւններ ձեռք առնուին: Շահը, ընդհակառակը, իրեն առաջին գործիքէ մին բրաւ Սուլթանի ամենէ աւելի ստանձնողն է: Հայրիկին հետ տեսակցելով անոր կ'ըսէր Շիրի-Գուրշիտի բարձր շքանշանովը զարդարելու հայերուն ալ Պարսկաստանի մէջ անպայման սղատութիւն տալ:

Իսլամ վեհապետին, Սուլթանին բաղձանքին հակառակ, հայոց շքանշան չափ յարկհատ արտօնութեան թիւնները ընդհանուր հայութեան եւ ի մասնաւորի Կովկասահայոց առջեւ նոր ու ընդարձակ ապարդիւք մը կը բանան լրջօրէն գործելու:

Պուլկարիայ մէջ հայ վարժարաններու գրաւուելէն եւ բարեկրթական ընկերութիւններու լուծուելէն յետոյ կտակարարներու եւ բարեբարներու առջեւ եկեղեցիէ զատ ուրիշ ազգային հաստատութիւն չի մնաց օգնելու, այնպէս որ եկեղեցիի շրջապատէն դուրս հայիւկան ոչինչ կայ այսօր:

Ըսինք թէ Պարսկաստանի մէջ գործելու ընդարձակ ապարդիւք կայ այժմ: Այո՛, 60 70 հազար հայեր կը բնակին այսօր Պարսից հողին վրայ. այս հայոց ահագին մեծամասնութիւնը տգիտութեան խաւարին մէջ կը խորխորան, աղքատութիւնն ալ իրենց անբաժան ընկերն է: Ուստի ահա երկիր մը մշակելի որ նիւթական ու բարդական ամեն տեսակ աշակցութեան

պէտք ունի, եւ ուր ոչ թուրքին եւ թաղանդ կը հասնի եւ ոչ Ռուսիոյ կապտող զաքոններու տրամագրութիւնը կազդէ: Մեծահաւուստ միւր Ռուսահայերը նուէրով ու կտակով եւ խանդոտ երիտասարդ գաւառիկները, վաճառականը ու արհեստաւորը նիւթական ու բարոյական զոհողութիւններով պէտք է իրենց ժամագրափայլը ընեն Պարսկահայաստանը: Հոն կազմին բարեկրթական զանազան ընկերութիւններ, հաստատուն տիպար վարժարաններ, գիշերօթիկ ուսումնարաններ, լսարաններ, ընկերացարաններ եւ յառաջդիմելու ու անդամաւորակ ժողովուրդ մը զարգացնելու համար ամեն կարելուք բաներ: Վերջապէս հայաստանի ու հայութեան այդ ոչ աննշան մասը ազգային վառարան մը դարձնեն, ցորչափ աշատութիւն կը վայելեն հոն հայերը:

Շատ փափաքելի է որ ներկայ գարադուրը Պարսկահայաստանի զարգացման սկզբնաւորութեան թուականը բանայ, որուն ամբողջ հայութեան համար ո՛ր աստիճան կարեւոր ըլլալը հաւանաբար չի հարկ չէ:

ՀԱՅՐԱԿԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի գլխաւոր նահանգներուն մէջ հայոց վիճակըն այս տարի նախորդէն աւելի անտանելի դառնալը կիմացնեն Բիւթըրը եւ ուրիշ հեռագրական գործակալութիւններ:

Արարկերի Էհնէցիկ գիւղի դէպքը քերտերու ի գործ դրած բռնաբարութեանց վրայ կրնայ զաւաճար մը տալ: Սեպտեմբերին Գարաբունար գիւղէն բազմաթիւ Գիւրգիւր յարձակած են Էհնէցիկի վրայ, Գիւղին թիւրքերը աղաւթաբուծիւն ընդունեցին թէ իրենց համար վտանգ չկայ: Գիւրտերը սկսած են հայոց տուններուն վրայ կրակ ընել, հայք ունէ ընդգրկուած թիւն անկարող ըլլալով Գիւրգիւրը կողոպտած են անոնց տունները: Գիւղի երեւելիներէ մին ծանրապէս վիրաւորուած էր. եւ երբ Գիւրտերը զանի պիտի սպաննէին իր աղջիկը վրայ հասնելով գոհարեղենները փրկանք տուաւ ու իր հայրը ազատեց: Ուրիշ երկու հայեր ալ դիմագրել փորձած էին, գնդակահար եղան. մին մեռաւ, միւսն ալ վիրաւորուեցաւ:

Այս դէպքին համար կառավարութեան շահած քննութիւնը ցարդ ապարդիւն մնացած է:

Յուլիս ամսոյն Սպազանքը կոտորող Ալի փաշան՝ որ պաշտօնանկ ըլլալով երիզա փոխադրուած էր, Գարաբուրդի եւ Տէրսիմի նահանգներուն «բարեկարգութեան քննիչ» կարգուած է վերջերս: Ապէտք է հասկնալ թէ այդ բարեկարգութիւնը ինչ կը նշանակէ:

Բիւթըրի դորձակալութիւնը Բաղէշի եւ Մուշի հայոց կացութեան սրտամորմոք նկարագրութիւնը կընէ ու կ'ըսէ, «Գիւրտերու զգալի ժողովուրդը ամեն կերպ ճնշումի ու հալածանաց ենթակայ է. տեղական կառավարութեանց եւ անոնց օգնող քերտ պէտք ու հարստահարութիւնները խիստ վըտանգաւոր դրութեան մը մէջ գըրած են հայերը: Հայ գիւղացւոց տրտունջները բազմաթիւ եւ բազմատեսակ են»:

Բուն իսկ հայոց օգնութեամբ հաստատուած երկրագործական դրամատունները ամենամեծ դժբաւրութեամբ փոխաւորութիւն կընեն հայերուն, կըսէ Բիւթըր. այս խեղճերը իրենց արտերը, գործերը եւ պաշարը զրաւի գնելով, անոնց արժէքին մէկ հինգերորդ մասին չափ հազիւ փոխ դրամ կրնան առնել. եւ երբ որոշեալ օրը չի հատուցանեն, զրաւը կը վաճառուի եւ հաշիւը կը գործի:

Ամեն հայ մարդ պարտաւորուած է գաւառին ճամբաներու շինութեանը ձեռնադրու աշխատի եւ կամ 12 ղրշ. վճարել. բայց կառավարութիւնը թէ այդ ստակը իբրեւ տուգանք կը գանձէ եւ թէ ձեռնադրու կ'աշխատցնէ:

Մուշի դուռաւին մէջ հայերը կ'ստիպեն կառավարական շէնքերն ալ թէ ձրի չինեւ եւ թէ այդ շէնքերու պէտք եղած առաջը հայութեան վերջերս թիւրքերը եւ քերտեր Մուշի եւ շրջակայ գաւառներու հայոց տեղերը հաստատուեցան, գրաւելով անոնց հողերն ալ: Այժմ խեղճ հայերը իրենց հողերուն վրայ ձեռնադրու կաշխատին, իսկ աղքատները յափշտակող իսլամները կը քաղեն:

ՀԱՅԵՐԸ ՊԱՐՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՄ

(Շար. Աստուծոյ թոռնէն եւ վերջ)

Այս տարի Սալմաստում գեա ոչ վի գարոց չի բացուել, չնայելով որ հոստումնական տարեշրջանից 2 ամիս է անցկացել:

Սալմաստեցիք հիւրասէր են, բառին բովանդակ նշանակութեամբ հագնուած են բաւական ճաշկատոր. բնակարաններ բաւական մաքուր են. առհասարակ ունին լուսաւոր և գիղիցիկ կահաւորութեամբ սենեակներ: Սալմաստեցու բնաւորութիւն շատ բարձր է. նրանց ներքինը համեմատելով զժողովրդ և նոյն իսկ անկարելի է: Սալմաստեցու երի. տասարդ ուժը իր օր ու արեւ անցկացնում է պանդխտութեան մէջ և օր քաշելով, կեանքն ու արն մաշելով. չնորհիւ այս տխուր իրա կանխութեան ամուսնական հաւա. տարմութիւնը քիչ քիչ փչանում է վեհերական հիւսնդութիւններ արագ քայլերով առաջանում են:

Սալմաստի հովտում կան 60 գիւղեր մեծամասնութիւնը բնակ. ուած է թիւրքերով: Թիւրքեր, հայերի հետ մշտական յարաբերու. թեան մէջ գտնուելով, նրանց բա. բերար ազդեցութեան են ենթար. կուած: Կրօնական մօլեռանդու. թիւնը մեղմ է կրօնաւորներ Ռւ. մի և կամ ուրիշ տեղերի պէս ազդեցիկ չեն:

Գաւառաքաղաքն է Գիրման (1000 տուն թիւրք բնակչով. այստեղ է գտնուում Սալմաստի բազառը և պաշտօնատուններ:

Հայքը (1500 տուն) ցրուած են 28 գիւղերում:

Չուտ հայաբնակ գիւղերն են: Հափթվան (400 տուն) աջ գիւղը Սալմաստի հայ գիւղերի սիրտն է ունի երկգոստեան դպրոց, հարուստ

գրագործութեան (Սալ. Գր. սիրայ բնկերութեան) քարա շէն և հոյակապ եկեղեցի: Այս գիւղում են նստում Առաջ. փո. խանորդներ:

Փայաշակ (250 տուն), ունի երկ. դասեան դպրոց և գրագործան «Բաֆֆի» անունով գրագործանի սղարի գրութիւնը մեզ իրաւունք է տալիս, տախտ փոյսկայիններին թէ «պարոններ ձեր մեծ հայրե նակցի անունը մի անպատուէք»:

Մահլում (200 տուն) մի դասա. կան դպրոց ունի:

Սառնա (70 տուն) ունի մի դա սական ուսումնարան:

Ղալասար (70 տուն) ունի երկ դասեան երկսեռ դպրոց և գրագ. րան «Արծրունի» անունով. օրիօր. դաս դպրոցը պահոււմ է Ղալասարի կանանց բնկերութիւնը:

Սաւրա (120 տուն) բնակում են թիւրքերի հետ, ունին երկդասեան դպրոց: Այս գիւղում է կաթողիկ հայերի վանքն ու ուսումնարան: Հին-քաղաք Սարամերիկ, Ախր. խանա և խոսքով գիւղերում կան մի դասեան դպրոցներ:

Սալմաստում կան և 700 տուն Ստորինի որոնք իրենց Ուրմիցի ազգակցներին պէս ընկած գրու. թեան մէջ է:

Խոյ

Այս գաւառում կան 250 տուն հայեր որոնցից 100 տունը բնակ. ւում է Խոյ քաղաքում ուր այս տարի թիւրքերի հայրենեաց բար. ընկերութիւն մտածեր է դպրոց բաց անել, այստեղ է և Հայ-Գեր մանական որբանոց 100 որբերով: Գիւղերի մէջ նշանաւոր է Սէյդա. վարը, որ ունի ուսումնարան: Խո. յիցի հայերի կեանքում ոչ մի մը խիթարական երեւոյթ չկայ, ուրն. տեսապէս ընկած, հազեւոր միւր.

թարութիւնից պուրկ, արիւնակից. ներից հեռու, մի կիւրպ գլուխ են պահում, եօլա են գնում:

Իրիւ վերջաբան, այստեղ ու. զուժ եմ երկու խօսքով պատկերա. ցընել Պարսկահայքի հայերի դրու. թիւնը: Պարսկահայ ընդունակ է շատ զարգանալու, ներկայ վիճակը միւթարական չէ, բայց ապագան յուսատու է: Լինելով վառպուրա. կանին սահմանակից, մասնաւոր ուշադրութեան արժանի են: Մեր նկատողութիւններ, վեհակազրա. կան ծանօթութիւններ, մենք ստա. ցիլ ենք և տարւայ ընթացքում, մշտապէս հետաքրքրուելով, տխուր երեւութիւնների տխուր հետեւանքներ մեր իսկ կաշու վրայն էրկում:

ՀԱՂԱՅԻՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թառաղիկայ ծննդեան տօներու առթիւ Զէյթունի հրկիզելոց բու. խուելու համար Պատրիարքարանէ գումար մը ղրկուած է Զէյթուն: Նոյնպէս զբաւական մէկ մէկ գումարներ ղրկուած են Մաշի, Բաղնի և Տիգրանակերտի մէկ քանի խիտ կարօտ գիւղերու ազգայնոց:

— Բարիդի Հայ. մատուցին մէջ ի յիշատակ հանգուցեալ խորէն Ստեփանէ Եպիսկոպոսին հոգե. հանգիստ կատարուեր է:

— Վանայ Քաղաքական և Կրօ. նական ժողովները Պատրիարքա. րանէ խնդրած են որ այլևս դոր ժողովի հանգուցեալ Սրբանձ. եանց եպիսկոպոսի կտակը ուրուն համաձայն վանայ մէջ հիւանդա. նոց մը պիտի հաստատուի:

— «Րուսկի վէստմոստ» ի լրագրին գրածին համաձայն Բեթիւրպուր. կի մէջ մասնակցութեամբ նշանւոր իրաւաբաններու, զբազմոներու ե.

րեկոյթ մը պիտի տրուի եղեր հանգուցեալ բարերար Գ. Ջանչ. եանցի յիշատակին նուիրուած և ի նպաստ «Աղբատ հիւանդներուն ընթերցանութեան օգնող» ըն. կերութեան:

— Եգիպտոսի նորրնտրի առաջ. նորդ Ալվազեան Եպիսկոպոս զեկ. 11 ին Ալէքսանդրիա ժամանել է:

— Ուստր գումարելի Ալգ. Հա. մաթողովը պիտի բացուի ներկայ ամսոյս 22 ին տեղւոյն Ս. Փրկիչ ե. կեղեցիի ժողովարահին մէջ:

— Տեղւոյս երկսեռ Որբանոցի գործադիր ժողովոյ գիւանը խըմ. բազրութեանս ուզողուած մասնա. տր գրութիւններով շնորհակալու. թիւն կը յայտնէ Տալիշի Ալգ. վարժարանի անօրէն-դաստու Տ. Ս. Գուլումեանի որ հաճած է յանուն Որբանոցի 31 Քր. և 10 տանդիմ հաւաքել ու ղրկել. ն.յն. պէս Արթ. Տ. Սարգիս Քահանայ Ղարիպեանի և Տ. Յ. Ճանկիւբեանի անցորդներէ հաւաքած 6,80 Քր. ի համար. նմանապէս տգնուհի Տի. կին Տիւրուհի Թողաթլեանի որ բարեհաճած է ընկերութեան պաշ. տօնական կնիքը պատրաստել տալ: Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքին մէջ «Վանայ Նահանգին Երկրա. գործական Օթանդակ Միութիւն» անունով ընկերութիւն մը կազ. մուեր է վառպուրականի մէջ որ և է հաստատութեան մը նիւթապէս օգնելու, նպատակ ունենալով երկ. րազորութեան և գիւղատնտեսու. թեան ճիւղը նորագոյն մէթոտնե. րով մշակել տալ այն տեղի ազ. գայնոց:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՆԵՐ [37]

(ՊԱՅԿԵՐ ՄԵ ՏԱԶԿԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐԵՆ)

Հրաւիրուածները կը նստին կարգաւ այդ մեծ սան ճոխ սեղանի շուրջը, զոր Մանուշակ Տանտի. կինն ու Սաթենիկի ձեռքերը, զիւղական առատու. թեամբ լեցուցեր էին: Երբ լանի ընտիր չամչէն, հա նուած անխաղախ օղին՝ ու խուլթկայ կարմիր գինին, կսկսին մատուցակուել. ամենէն առաջ, Տէր Վահան գաւաթը բարձրացուցած, քանի մը պաղը խօսքերով կը դովէ այդ հանգեօր ներսոր. ու կաղօթէ որ, իր բոլոր հայրենակիցները արժանի ըլլան այդպիսի մեծարանքներու, չի մոռնար նա և շեշտել որ, այդ ամեն, իրենց ամբողջութեամբ Գուրգէնի շնորհն են: Գուրգէնը չափազանց յուզ. ուած կը պատասխանէ: Ու գաւաթներու խնդա. լից բախումներուն և կեցցէներուն մէջ կը խմեն ամեն մէկը իրենց սիրական ցօրն:

Սաթենիկ ոտքի վրայ, իր պահած ամենէն ըն. տիւր զգեստները հաղած, թիթեռու ալեւամի մը պէս, իր մօր ձեռքին առջեւ կը դառնար: Ու մերթ իր հիւստեանց «չքեր» Սահադէ հայրացիին հան. դիպեցով, աջ երկու օրտերը, երկքորական հո. անքի մ'ամենէն բռնն ազգեցութեամբ կը ցրն. ցուէին, Սահակը, գրեթէ կոյսի մը պատկանանքով ու հերոսի մը համարութեամբ լուս. կը մնար: Եւ ինչ հարկ կար իր խօսիւուն, քանի որ ամեն բե. րան շինք կը գտնէին:

Այդ առատ սեղանէն ետք, Տանուէր Վարդգէ. սը՝ կը կանչէ իր հինգ կարիճ սղաքները: Որոնք կարգաւ կը շարունին նստողներու դիմաց. ու կը յայտարարէ բացարձակապէս որ, նահակը իր հինգ օղից մեծ եղբայրն է. Հայրուհինց սուտը՝ այդ մօր մէկ կտրիճին շատ երախտապարտ է: Ու ինչպէս ի. րենց երախտապարտութեան՝ ա՛յն դեղին պլազուկ հրաքանդը զոր Մոսկուայի Սուլէյման աղան իրեն ստեղծ էր, կառավարէ Սահակուն ընծայել: Քանի որ նա արդէն քաջ որսորդ ու անվրէպ նպատակու. կէտը գնդակահար բնող մէր:

Սահակ իր բոլոր վիհանձնութեամբ կը հրաժա. րէ այդպիսի նուէրէ մը. կը խնդրէ որ զանիկայ իր ուսուցչին տան, քանի որ այդ բոլորը՝ ինքն աւոր կը պարտի. և թէ՛ ինքն արդէն մէկ երկու տեսակ հրաքանդներ ունի: Ու Վարդգէսն ու Սահա. կուն աղաջանքով, Գուրգէն կը համակերպի, մեկ. նուաւ ատեն այդ հրաքանդը՝ իր պարագաներով, Սա. հակն իր ձեռքով Գուրգէնից տան բնեղերանի տա. կի մեծ սիւնէն կը տանի կը կախէ: Հայրուհինց սուտէն այդ խումբի գուրս ելած ատեն, գիւղի միւս բնակիչները դուռն ելած զանոնք թափաշայ կընեն. . . ու միաժամաբար շատ բանիւր կը խօ. սին:

Կանցիւր ամառուան կալ ու կուտի մամանակնե. րը, հետզհետէ կը թիթեռնան գիւղական աշխատու. թիւնները փ. . . գիւղի տնիւն ու մառանները՝ իրենց չինականի արքար քրախիքի արտագրու. թեամբ, կը լեցուին հազար բօրիքով: Ու անխա. դախ երկրագործը՝ իր հալայ քրախիքի վառտակը վախելելու ու ձմեռուան պարտուցի օրերուն տաք «օճախին» ու չէն «թոփի» մօտիկ, ձմով պոռով, (մեծ ու պոռով ընդածիններ) անկ սրտ ապրու. տի մը հախար արտակարգ ջանքերը կը թափէր:

Սեպտեմբերի սկիզբները, երբ աշունը իր ուշա. նիչ ազդեցութիւնը ցայց տալէ առաջ, երեւոյթաւ

կան վերգարթնում մը կուտայ գաղտնիքն ու անձ. րեւով կակղացած հողերուն: Նոյնքան գեղեցիկ ու նոյնքան բանաստեղծական է այդ գիւղի բնա. կան գիւղը, որքան ապրելի մէջը: Իր պուրակա. ւոր գողդրիկ լեռները՝ շուրջանակի պար բռնած, «Միանձնեք» հսկայ կատարի վսեմ տեսարանով, իր անթիւ ու անհամար ծառերու ու սուկերով ու ոսախիտ սաղարթներով, իր կէտ մշակուած ու կէս հնձած արտերու խառնուրդով թեամբ վազող առատ ջրերու ու առաւանդներու կարկաշտմով, եր. բէք չեն զդաշնէր որ, բնութիւնը իր գոտորթու. թիւն կորսնցնելու ու ձմեռուան անզգայ նիւթ ձիւն հաստ ծածկոյցին ներքեւ քաշելու հակամիտի:

Այս գեղեցիկ օրերէն իրիկուն մը, ուշ ատեն, երբ լուսին իր արծաթ շղերով այդ դախտանման գիւղը կ'ողողէր: Սահակը, իրենց դարաժառանգ թեմը նստած՝ աջ ձեռքը իր ծնօղին, ու արմուն. քը ծունկին յեցած, սիրալաւ աչքերը լուսնի փայ. լոն սկաւառակին յառած, մտածման անըմբռնելի ուժի մը ներքեւ կը ցանկար իր Սաթենիկի հետ մէկտեղ, օրերով ամիսներով լեռները թափառել, թոփերու տակ ապրել, պաղ պաղ աղբիւրներու շուրջ դառնալ. . . ու լուսնի անուշ լոյսով, իրենց Հայրենի սարերու մէջ, պարզաւի ու կաքաւի հետ, երգէին իրենց սրտէն բխած երգերը: Իրարմով կշ. տանային, բնութեան փարթաւ ծոցին մէջը թաղ. ուած, յանկարծ թուփերու մէջէն ոսանձայն մը կը լսէ, երեսը այն կողմը կը դարձունէ, քիչ մը կը դիտէ, ու չ'ո գեր հաւատալ իր աչքերուն: Սահակն մէկէն երազէն իրաւանութեան կուգայ: Եկողը Սաթենիկն էր:

(Շարունակելի)

